ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «01» հուլիսի 2019թ.

2019թ-ի հունիսի 25-ից մինչև հուլիսի 1-ը, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոնում, տեղի ունեցավ ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արմեն	Խաչատրյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր իրավաբան-իրավական խորհրդատվության և հայտերի կարգավորման վարչության պետ.
Մարիանա	Վասիլյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման մասնագետ.
Վահան	Ղարիբյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման բաժնի պետ.
Նարեկ	Գրիգորյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ տնտեսվար-վարորդ"
Լիլիթ	Վարոսյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր հաշվապահ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գնումների մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի, վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը նշեց, որ գնման առարկայի նախահաշվային գինն է.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Ընդհանուր նախահաշվային գինը
1.	Ներքին աուդիտի ծառայություններ	300000

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հունիսի 25-ին, ժամը «17:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/հ	Մասնակցի անվանում
1.	Ֆ/Ա Անի Հախվերդյան

Որոշվեց՝

1. Արմեն Խաչատրյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Մասնակցի/ների/ անվանումը և առաջարկած գինը՝ /ՀՀ դրամ/	
		Արժեք	Ընդհանուր գին
1.	Ներքին աուդիտի ծառայություններ	351 000	351 000

Որոշվեց՝

1. Արմեն Խաչատրյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ՉԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Ֆ/Ա Անի Հախվերդյանի գնային առաջարկը գերազանցում էր ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-19/2 ծածկագրով

գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի մասնակցի հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին Ֆ/Ա Անի Հախվերդյանի կողմից առաջարկած վերջնական գինը սահմանվեց 300 000 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել Ֆ/Ա Անի Հախվերդյանին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Խաչատրյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Վասիլյան _____

Վ. Ղարիբյան _____

Ն. Գրիգորյան _____

Լ. Վարոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____